ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.05.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/197

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.05.2022թ. թիվ 26/26-1/7764-2022 գրությամբ «Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 25.04.2022թ. թիվ ՊՆ/02/2006-2022 գրության հիման վրա, 02.05.2022թ. թիվ 26/26-1/7764-2022 գրությամբ նախաձեռնել է «Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«ՍՑ-ՆԳ-2022/197 ընթացակարգի վերաբերյալ հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ի կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-7/4» շրջանակներում «ԼԱԲՏԵԽԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն շտկման վերաբերյալ ծանուցում չի ստացել իր կողմից օգտագործվող և ARMEPS համակարգում գրանցված Labtechgroup@yandex.ru էլեկտրոնային հասցեին, որպես հիմնավորում կից ներկայացնում ենք ՀՀ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿԻ կողմից 27.05.2022թ տրված N 22-0065 Պ եզրակացությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեզ «ԼԱԲՏԵԽԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/197 ընթացակարգի շրջանակներում 30.05.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.04.2022թ. թիվ ՊՆ/02/2006-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-7/4» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), հայտ է ներկայացրել «Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից): Հայտերի գնահատման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի ներկայացրած հայտում արձանագրվել է անհամապատասխանություններ՝ հայտի հավելված N 1-ում պատվիրատուի անվանումը սխալ է նշված՝ ՀՀ պաշտպանության նախարարության փոխարեն նշված է ՀՀ Ոստիկանություն, իսկ վերջում նշված է «կից ներկայացվում է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1», որը ծառայությունների գնման դեպքում չի նշվում, քանի որ մասնակիցը տեխնիկական բնութագիր չի ներկայացնում, հավելված N 1.3-ում՝ իրական շահառուների վերաբերյալ

հայտարարագրում լրացված չեն 4.7.1, 4.8.2 կետերը (իրական շահառուի կարգավիճակի և կոնտակտային տվյալների վերաբերյալ տեղեկություններ), իսկ 4.1.2 և 4.1.4 կետերում՝ ազգանունները տարբեր են, չեն համապատասխանում իրար: ՈՒստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 19.04.2022թ. ծանուցել վերոնշյալ մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները և 22.04.2022թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է «Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/197 ընթացակարգի շրջանակներում 30.05.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/197 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/197 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-7/4» ծածկագրով գնանշման հարցում (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ Ընկերության կողմից ներկայացված հայտում, մասնավորապես՝

- Ընկերության կողմից ներկայացված հայտի Հավելված N 1-ում պատվիրատուի անվանումը սխալ է նշված՝ ՀՀ պաշտպանության նախարարության փոխարեն նշված է ՀՀ ոստիկանություն, իսկ վերջում նշված է «կից ներկայացվում է մասնակցի կողմից առաջարկվող ապարքնի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1», որը ծառայությունների գնման դեպքում չի նշվում, քանի որ մասնակիցը տեխնիկական բնութագիր չի ներկայացնում»,
- Հայտի Հավելված N 1.3-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում լրացված չեն 4.7.1, 4.8.2 կետերը (իրական շահառուի կարգավիճակի և կոնտակտային տվյալների վերաբերյալ տեղեկություններ),
- 4.1.2 և 4.1.4 կետերում՝ ազգանունները տարբեր են, չեն համապատասխանում իրար:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 19.04.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն՝ 22.04.2022թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

6. Ընկերության կողմից Ընթացակարգի քննության ընթացքում ներկայացվել է «Փորձաքնությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված 27.05.2022թ. թիվ 22-0065Պ փորձագիտական եզրակացությունը՝ Ընկերության առաջադրած հետևյալ հարցի վերաբերյալ.

««Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ի labtechgroup@yandex.ru էլ հասցեին ստացված էլ. նամակների մեջ կան արդյոք info@armeps.am էլ. հասցեից 19.04.2022թ. ստացված էլ. նամակներ և եթե այո տրամադրել դրանք»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.05.2022թ. թիվ 26/26-1/7764-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.04.2022թ. թիվ ՊՆ/02/2006-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը և «Փորձաքնությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված 27.05.2022թ. թիվ 22-0065Պ փորձագիտական եզրակացությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.10-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-7/4» ծածկագրով գնանշման հարցում, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ Ընկերության կողմից ներկայացված հայտում, մասնավորապես՝

- Ընկերության կողմից ներկայացված հայտի Հավելված N 1-ում պատվիրատուի անվանումը սխալ է նշված՝ ՀՀ պաշտպանության նախարարության փոխարեն նշված է ՀՀ ոստիկանություն, իսկ վերջում նշված է «կից ներկայացվում է մասնակցի կողմից առաջարկվող ապարքնի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1», որը ծառայությունների գնման դեպքում չի նշվում, քանի որ մասնակիցը տեխնիկական բնութագիր չի ներկայացնում»,
- Հայտի Հավելված N 1.3-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում լրացված չեն 4.7.1, 4.8.2 կետերը (իրական շահառուի կարգավիճակի և կոնտակտային տվյալների վերաբերյալ տեղեկություններ),
- 4.1.2 և 4.1.4 կետերում՝ ազգանունները տարբեր են, չեն համապատասխանում իրար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 19.04.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն՝ 22.04.2022թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Ընկերության կողմից Ընթացակարգի քննության ընթացքում ներկայացվել է «Փորձաքնությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված 27.05.2022թ. թիվ 22-0065Պ փորձագիտական եզրակացությունը՝ Ընկերության առաջադրած հետևյալ հարցի վերաբերյալ.

««Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ի labtechgroup@yandex.ru էլ հասցեին ստացված էլ. նամակների մեջ կան արդյոք info@armeps.am էլ. հասցեից 19.04.2022թ. ստացված էլ. նամակներ և եթե այո տրամադրել դրանք»:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ վերը նշված փորձագիտական եզրակացությունը տրվել է հետևյալ բովանդակությամբ.

Համար՝ 22-0065Պ

Փորձաքննության տեսակը՝ համակարգչատեխնիկական:

Փորձաքննության հիմքը՝ «Լաբտեխգրուպ» ՍՊԸ տնօրեն Լ.Ալեքսանյանի՝ 2022թ-ի մայիսի 24-ի դիմումը փորձագիտական բնույթի ծառայությունների կատարման վերաբերյալ, որը ստացվել է 24.05.2022թ.-ին:

Փորձաքննությունը սկսվել է՝ 2022թ.-ի մայիսի 25-ին:

Փորձաքննությունն ավարտվել է՝ 2022թ.-ի մայիսի 27-ին:

Փորձագետի եզրակացությունը շարադրված է՝ «3» էջերում:

Տեղեկություններ փորձաքննությունը կատարող փորձագետի մասին

Սարգիս Սամվելի Գրիգորյան՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի համակարգչատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ, փորձագետ՝ բարձրագույն տեխնիկական կրթությամբ, համակարգչատեխնիկական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ, փորձագիտական աշխատանքի ստաժը՝ մոտ 12 տարի:

Պարզաբանման համար առաջադրված հարցը

«**1.** «Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ի labtechgroup@yandex.ru էլ. հասցեին ստացված էլ. նամակների մեջ կան արդյոք info@armeps.am էլ. հասցեից 19.04.2022թ. ստացված էլ. նամակներ և եթե այո, ապա տրամադրել դրանք»:

Առաջադրված հարցերի պարզաբանման համար տրամադրվել է

«labtechgroup@yandex.ru» էլեկտրոնային փոստի հաշիվ մուտք գործելու մուտքանունը, ծածկագիրը և մուտք գործելու հաստատման կոդը:

Օգտագործված սարքեր և ծրագրային ապահովումներ

1. «Google Chrome» ծրագրային ապահովում:

Օգտագործված գրականություն

1. Bill Nelson, Amelia Phillips, Frank Enfinger and Christopher Steuart. Guide to Computer Forensics and Investigations, Second Edition - Canada, 2006.,

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Հետազոտությունն ընթացել է հետևյալ կարգով.

Փորձագետի համակարգչում տեղադրված «Google Chrome» զննարկիչ ծրագրային ապահովումը գործարկվեց և այցելվեց «https://yandex.ru/» համացանցային կայք: Պատվիրատուի կողմից տրամադրված մուտքանվան, գաղտնաբառի և համապատասխան

հաստատման կոդի միջոցով մուտք գործվեց «labtechgroup@yandex.ru» էլեկտրոնային փոստի հաշիվ:

Սույն փորձաքննությամբ հետազոտվեց «labtechgroup@yandex.ru» էլեկտրոնային փոստի հասցեին ստացված էլեկտրոնային նամակները, որոնք պահպանված են «Входящие» պանակում, որոնց հիման վրա էլ կատարվեց սույն փորձաքննությունը: Հարկ է նշել, որ նախկինում նշված էլ. փոստին ստացված և ջնջված տեղեկատվությունը սույն հետազոտության ծավալում չի ներառվել՝ սույն փորձաքննության շրջանակներում դրա վերաբերյալ տվյալների ձեռք բերման անհնարինության պատճառով:

Հետազոտությամբ հայտնաբերվեցին պատվիրատուի կողմից նշված 19.04.2022թ-ին ստացված էլեկտրոնային նամակները: Պարզվեց, որ առկա է «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից 19.04.2022թ-ի ժամը՝ 16:24-ին ստացված թվով 1 էլեկտրոնային նամակ, որի տեքստային բովանդակությունը բերվում է ստորև.

Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ.8188725] Հաղթողների հայտարարում

IN info@armeps.am info@armeps.am 19 апреля в 16:24
info@armeps.am

ARMEPS համակարգ - Հաղթողների հայտարարում

ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ կողմից ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/27 ծածկագրով գնանշման հարցման բժշկական նշանակության ապրանքներ ձեռքբերում ՄՀ-ի գնահատման փուլն ավարտվել է: Ձեր կազմակերպությունն ընտրված հաղթող կազմակերպություններից մեկն է:

Համակարգում գնահատման արդյունքները հասանելի են հետևյալ հղմամբ՝
http://www.armeps.am/epps/eawarding/prepareViewAwarding.do?resourceId=8188725

****
ARMEPS համակարգում բոլոր գործողությունները գրանցվում են աուդիտի նկատառումներով: Սույն նամակը և կից ֆայլերը կարող են պարունակել գաղտնի տեղեկատվություն, որը պաշտպանված է օրենքով: Այն չպետք է ուղարկվի, օգտագործվի կամ կրկնօրինակվի առանց թույլտվության: Եթե Դուք սխալմամբ եք ստացել սույն նամակը, ապա խնդրում ենք այդ մասին տեղեկացնել նամակն ուղարկողին և/կամ համակարգի ադմինիստրատորին, և ջնջել նամակն ու կից ֆայլերը:

Խնդրում ենք չպատասխանել այս նամակին:
****

ARMEPS system - Announce Winners

Evaluation phase for Call for Tenders with title ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ կողմից ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/27 ծածկագրով գնանշման հարցման բժշկական նշանակության ապրանքներ ձեռքբերում has been completed. Your Organization
has been selected as one of the Winning Organizations.

In order to view the competition's results please visit the Results section following link:
http://www.armeps.am/epps/eawarding/prepareViewAwarding.do?resourceId=8188725

****
All actions within the ARMEPS system are recorded for auditing purposes. This message and its attachments may contain confidential or privileged information that is protected by law; it should not be distributed, used or copied without permission. If you have received this email in error, please notify the sender and/or the system administrator, and delete this message and its attachments.

Please do not reply to this mail.

****

Այնուհետև հետազոտվեցին «labtechgroup@yandex.ru» էլեկտրոնային փոստի հասցեի «Удаленные» և «Спам» պանակները (որոնցում պահպանվում են համապատասխանաբար գործածողի կողմից ջնջված և էլ. փոստի կողմից մերժված էլեկտրոնային նամակները), արդյունքում վերոնշյալ պանակներում էլ. նամակներ չհայտնաբերվեցին:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ փորձագետը հանգում եմ հետևյալ հետևություններին.

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պատվիրատուի կողմից նշված՝ «labtechgroup@yandex.ru» էլեկտրոնային փոստի հասցեին ստացված էլեկտրոնային նամակների մեջ հայտնաբերվել է 19.04.2022թ-ին «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված ստացված թվով 1 էլեկտրոնային նամակ, որի բովանդակությունը բերվում է ստորև.

Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ.8188725] Հաղթողների հայտարարում

info@armeps.am info@armeps.am 19 апреля в 16:24
info@armeps.am >

ARMEPS համակարգ - Հաղթողների հայտարարում

ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ կողմից ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/27 ծածկագրով գնանշման հարցման բժշկական նշանակության ապրանքներ ձեռքբերում ՄՀ-ի գնահատման փուլն ավարտվել է: Ձեր կազմակերպությունն ընտրված հաղթող կազմակերպություններից մեկն է:

Համակարգում գնահատման արդյունքները հասանելի են հետևյալ հղմամբ՝
http://www.armeps.am/epps/eawarding/prepareViewAwarding.do?resourceId=8188725

****
ARMEPS համակարգում բոլոր գործողությունները գրանցվում են աուդիտի նկատառումներով: Սույն նամակը և կից ֆայլերը կարող են պարունակել գաղտնի տեղեկատվություն, որը պաշտպանված է օրենքով: Այն չպետք է ուղարկվի, օգտագործվի կամ կրկնօրինակվի առանց թույլտվության: Եթե Դուք սխալմամբ եք ստացել սույն նամակը, ապա խնդրում ենք այդ մասին տեղեկացնել նամակն ուղարկողին և/կամ համակարգի ադմինիստրատորին, և ջնջել նամակն ու կից ֆայլերը:

Խնդրում ենք չպատասխանել այս նամակին:
****

ARMEPS system - Announce Winners

Evaluation phase for Call for Tenders with title ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ կողմից ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/27 ծածկագրով գնանշման հարցման բժշկական նշանակության ապրանքներ ձեռքբերում has been completed. Your Organization
has been selected as one of the Winning Organizations.

In order to view the competition's results please visit the Results section following link:
http://www.armeps.am/epps/eawarding/prepareViewAwarding.do?resourceId=8188725

****
All actions within the ARMEPS system are recorded for auditing purposes. This message and its attachments may contain confidential or privileged information that is protected by law; it should not be distributed, used or copied without permission. If you have received this email in error, please notify the sender and/or the system administrator, and delete this message and its attachments.

Please do not reply to this mail.

****

«labtechgroup@yandex.ru» էլեկտրոնային փոստի հասցեի «Удаленные» և «Спам» պանակներում էլեկտրոնային էլ. նամակներ չեն հայտնաբերվել (մանրամասն՝ «Հետազոտական մաս»-ում):

Այսպիսով՝ վերը նշված փաստական հանգամանքի ուժով՝ գտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-7/4» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի շրջանակներում շտկման վերաբերյալ 19.04.2022թ. ծանուցում չստանալու հետևանքով ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.05.2022թ. թիվ 26/26-1/7764-2022 գրությամբ «Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**